

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՊՄԻ-ի ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի 2015թ. փետրվարի 16-ի խորհրդի թիվ 10 արտահերթ նիստի

### ՕՐԱԿԱՐԳ

1. «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ», «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» մասնագիտությունների պետական որակավորման քննությունների կարգի մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:

### Լսեցին՝

1. «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ», «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» մասնագիտությունների պետական որակավորման քննությունների կարգի մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:

*Հաղորդեց՝* Ա.Խաչատրյանը:

*Արտահայտվեցին՝* Ա.Սաթևոսյանը, Կ.Հովհաննիսյանը, Բ.Մերոբյանը, Ե.Տոնոյանը:

### Որեշեցին՝

1. Պետական որակավորման քննությունները անցկացնել մեկ փուլով՝ մեկ քննությամբ-«Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտությունից քննական հարցատոմսի մեջ ընդգրկել երկու հարց ՖՂՏ և մեթոդիկա առարկայից և մեկ գործնական հարց մարմնամարզություն, աթլետիկա, սպորտային և շարժական խաղեր հատուկ մասնագիտական առարկաների դասավանդման մեթոդիկայից: «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» մասնագիտության գծով երկու հարց՝ ՆԶՊ դասավանդման մեթոդիկա առարկայից, 1 հարց ՖՂՏ և մեթոդիկա առարկայից:
2. Ինստիտուտի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել վերոհիշյալ փոփոխությունները:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

դոցենտ Ա.Խաչատրյան

քարտուղար՝

Վ.Գրիգորյան